Արձանագրություն N 4

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-7 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք.Երևան **« 17» «02» 2026թ. ժամը 15:00**

ՀՀ ՆԳՆ կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-7** ծածկագրով գնահատման նիստը հետաձգվել էր և «Գորգանի» ՍՊԸ-ին, «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին, «Արա Սահակյան» ԱՁ-ին և «Իլիկ Գրուպ» ՍՊԸ-ին առաջարկվել էր 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Մասնակիցների կողմից շտկված հայտերը ներկայացվել են ժամանակին:

1. **Տվյալներ՝ շտկված հայտի ուսումնասիրման և գնահատման մասին.**

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-7 ծածկագրով գնման ընթացակարգի շտկված հայտերը.

Մասնավորապես՝

1.«Գորգանի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա էին հետևյալ անհամապատասխանությունները.

Հավելված 1-ում և հավելված 1.3-ում բացակայում էին էլեկտրոնային ստորագրությունները, իսկ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի կայքէջի հղումը կցված էր, սակայն չէր բացվում ամբողջական տեղեկատվությունը, ինչպես նաև ամբողջությամբ բացակայում է տեխնիկական բնութագիրը՝ ֆիրմային անվանումը, արտադրողի անվանումը:

«Գորգանի» ՍՊԸ-ի կողմից շտկումները կատարվել են թերի՝ իրական շահառուի կայքէջի հղումը բացվում է կիսատ և ամբողջական տեղեկատվություն չի տրամադրում:

Ելնելով վերոգրյալից գնահատող հանձնաժողովը առաջնորդվելով՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ՝ օրենքի 6–րդ հոդվածի 6–րդ կետի բ ենթակետի պահանջները, ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-7 ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակից «Գորգանի» ՍՊԸ -ին՝ 9-րդ չափաբաժնի մասով ներկայացրած հայտը գնահատվում է անբավարար և ենթակա է մերժման: Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա՝ մերժված մասնակիցը գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում կհայտնվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. «Իլիկ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացված հայտում բացակայում էր իրական շահառուի կայքէջի հղումը, որը մանակցի կողմից շտկվել է ժամանակին և գնահատվում է բավարար:

3. «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի ներկայացված տեխնիկական բնութագրում՝ անհրաժեշտ էր հստակեցնել ֆիրմային անվանումը և արտադրողի անվանումը,որը մասնակցի կողմից շտկվել է ժամանակին և գնահատվում է բավարար :

4.«Արա Սահակյան Արթուրի» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտում առկա էին անհամապատասխանություններ մասնավորապես՝ բացակայում էին տեխնիկական բնութագրում՝ ֆիրմային անվանումը, արտադրողի անվանումը, որը մասնակցի կողմից շտկվել է ժամանակին և գնահատվում է բավարար:

Հանձնաժողովը որոշեց՝

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-7 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված՝ առաջին տեղերը զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝ Իլիկ Գրուպ ՍՊԸ-ին՝ 1-ին չափաբաժնի մասով, ՏԵՔՍՏԻԼԱՐՏ ՍՊԸ-ին՝ 2-րդ չափաբաժնի մասով, Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ -ին 3-րդ չափաբաժնի մասով, Կարեն Պողոսյան Ա/Ձ-ին 4-րդ, 11-րդ, 12-րդ չափաբաժինների մասով, Արա Սահակյան Արթուրի ԱՁ-ին՝ 5-րդ չափաբաժնի մասով, Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ին՝ 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով, Տեքստիլ Փիփ ՍՊԸ-ին՝ 8-րդ, 10-րդ, 13-րդ և 14-րդ չափաբաժինների մասով :

9-րդ չափաբաժինը հայտարարվում է չկայացած համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ կետի 1-ին ենթակետի:

Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ: Անգործության ժամկետի ավարտից հետո «Իլիկ Գրուպ » ՍՊԸ-ին, ՏԵՔՍՏԻԼԱՐՏ ՍՊԸ-ին, Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ, Կարեն Պողոսյան Ա/Ձ -ին, Արա Սահակյան Արթուրի ԱՁ-ին, Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ -ին և Տեքստիլ Փիփ ՍՊԸ-ին կառաջարկվի կնքել պայմանագրեր:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0 :

Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Բաբայան

Հանձնաժողովի անդամներ՝ Դ. Սայադյան

Ջ. Տիգրանյան

Քարտուղար՝ Է. Մնացականյան